ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
1101 ք. Էջմիածին, Մաշտոցի 0
հեռ. +374 (231) 5-36-63-112

АРМАВИРСКИЙ МАРЗ
ДИРЕКЦИЯ
"БАРЕКАРГУМ"
ЭЧМИАДЗИНСКОЙ
ГОРОДСКОЙ ОБЩИНЫ
1101 г. Эчмиадзин, ул. Маштоца 0
тел.+374 (231) 5-36-63-112

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "BAREKARGUM" DIRECTORIATE OF EJMIATSIN CITY COMMUNITY
0 Mashtots st. ,1101, Ejmiatsin, tel. +374(231) 5-36-63-112

№ 14 «10» 05 2019թ.

<<Խաչատուրյան Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ
Տնօրեն Ա. Խաչատուրյանին
հասցե՝ ք. Էջմիածին Կույբիշև փող. թիվ 4,
ՀՎՀՀ 04715751
էլ.հասցե՝ khach_bild_group@rambler.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

<<Խաչատուրյան Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ի և Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինության միջև **15.04.2019թ. N ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/3** ծածկագրով Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինության կարիքների համար Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագրի) շրջանակներում <<Խաչատուրյան Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ -ն մինչև 2019թ. մայիսի 10-ը պետք է կատարեր Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային՝ 11 385 000 ՀՀ դրամի գումարային արժեքով աշխատանքներ, սակայն պայմանագրով նախատեսված աշխատանքները 10.05.2019 թվականի դրությամբ նույնիսկ դեռ չեն սկսվել:

Այսպես Կապալառուն 2019 թվականի ապրիլի 17-ին պետք է սկսեր պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները, որոնք պետք է կատարվեին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին համապատասխան և ավարտվեին 2019 թվականի մայիսի 10-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, N **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/3 ծածկագրով** պայմանագրի 3.1.4 կետի ա) և բ) ենթակետերիի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի <<Բարեկարգում>> տնօրինություն կողմից կազմված թիվ 2 արձանագրությունը 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել **15.04.2019թ.** կնքված N **ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/3 ծածկագրով** պայմանագիրը:

Տեղեկացվում է, որ <<Խաչատուրյան Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900325151109 հաշվեհամարին համաձայն Պայմանագրերի 6.3-րդ կետի, փոխանցել 56 925 /հիսունվեց հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ որպես տուգանք, ինչպես նաև համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900325151109 հաշվեհամարին ենթակա է գանձնման 1 138 500 /մեկ միլիոն հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր/ՀՀ դրամ՝ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 տոկոսը):

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ